

## «ՍԱՐՈՅԵԱՆԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՏԵՎԻՑ»:

Գլխ. խմբագիր՝ Սուրեն Դանիելեան- Եր.: «Զանգակ-97», 2009,-144 էջ:

Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի հրավիրած երկօրյա միջազգային գիտաժողովի (14-15 հոկտեմբեր, 2008) նյութերի այս ժողովածուն ներառում է Հայաստանի և Սփյուռքի սարոյանագետների հողվածները, որոնք, լրացնելով միմյանց, լուսաբանում են մեծ գրողի կյանքի ու ստեղծագործության տարբեր կողմերը: Գիրքը կազմել և խմբագրել է կենտրոնի ղեկավար, բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

Ժողովածուն յուրօրինակ փորձ է՝ տարբեր մեկնակետերից քննելու Սարոյան գրողի, իմաստասերի և գեղագետի հոգեմտավոր որոնումների բազմաձև շերտերը: Մի դեպքում հողվածագիրների տեսադաշտում հայտնվում են սարոյանական կերպարների՝ կյանքն ընկալելու բարոյահոգեբանական նրբերանգները (Ս. Դանիելյան, Գ. Նազարյան, Ա. Դուրխանյան),

մյուս դեպքում առաջին պլան են մղվում գոյափոխութայական խնդիրների հանդեպ մեծ գրողի՝ ձևակերպումներում պարզ, իսկ իմաստային առումով՝ խորքային ըմբռումները (Հ. Մուսայելյան, Բ. Գալստյան, Ի. Կարապետյան), երրորդ դեպքում Ու. Սարոյան-հայ իրականություն փոխառչություններն են, որոնք դիտարկվում ու քննվում են հայ գրողների, թատերագետների գնահատականների հենքի վրա (Վ. Փիլոյան, Լ. Մուրաֆյան): Եվ իրավացի է Վ. Փիլոյանը, երբ, երկրորդելով հայ մեկ այլ մեծանուն գրողի՝ Հ. Մաթևոսյանի միտքը, նկատում է. «Եթե ամենուր եւ ամեն ինչում ենթադրում է չափման նվազագույն միավոր, ապա Ու. Սարոյեանի գրականութեան չափման միավորը մարդն է, եւ նրա նպատակն ու երազանքն են մարդն ու մարդկայնութիւնը»<sup>1</sup>:

Խրախուսելի քայլ է ժողովածուում «Միջազգային գիտաժողովի ուսանողական ենթաբաժին» խորագրի ներքո

<sup>1</sup> Վալերի Փիլոյեան, Ուիլեան Սարոյեանը՝ Զրանդ Սատթեսեանի գնահատմամբ, «Սարոյեանի ճշմարտութեան ետեւից», Եր., «Զանգակ,-97», 2009, էջ 76:

ուսանողների կարդացած գեկուցումների ներառումը: Նրանցից մի քանիսի վերնագրերն անգամ («Հայկական ոգու ըմբռնումը Ուիլեամ Սարոյեանի երկերում», «Մարդը եւ աշխարհը Ուիլեամ Սարոյեանի «Ուեալի Ջեքսոնի արկածները» վեպում», «Կեանքի եւ մահուան խորհուրդը Ուիլեամ Սարոյեանի ուշ շրջանի ստեղծագործություններում») վկայում են մեծ գրողի ստեղծագործական ժառանգության հանդեպ նոր սերնդի լրջմիտ մոտեցման և գիտական հետաքրքրությունների շրջանակների մասին:

Ուիլյամ Սարոյանը հարազատ ժողովրդի անցած նախորդ հարյուրամյակների պատմության խտացումն ու միաժամանակ՝ համադրումն էր այն նոր միջավայրին, որը բաժին էր ընկել Մեծ եղեռնի հետևանքով իրենց բնօրրանից զրկված հայ ժողովրդի բազում զավակներին: Այդ խտացումն ու համադրությունը տեղի ունեցան այնքան բնական ու ներդաշնակ, որ, ինչպես նկատում է «Ուիլեամ Սարոյեանի նպաստը ամերիկեան գրականության եւ հայության» հոդվածի հեղինակ,

պրոֆ. Օշին Քեշիշյանը, «...իր իսկ գործերուն մէջ ան նրբանկատօրէն Հայաստանն ու հայը հաճախ ներկայացուց առանց յոգնեցնելու կամ ձանձրացնելու ընթերցողը՝ իր պարզ ոճին յաճախ միացնելով նուրբ զուարթախոհութիւն մը»<sup>2</sup>:

Ժողովածուն կազմված է խնամքով, հոդվածների տեղադրման և հաջորդականության մեջ նկատելի է դրանց կառուցվածքային ներքին միասնություն և փոխկապակցված ամբողջականություն հաղորդելու միտումը, ինչը գիտական առումով անհրաժեշտ և արդարացված մոտեցում է:

«Սարոյեանի ճշմարտութեան ետեւից» հոդվածների ժողովածուն ուշագրավ ներդրում է սարոյանագիտության մեջ:

Դավիթ Վ. Պետրոսյան

David V. Petrosyan  
“AFTER THE TRUTH OF SAROYAN”. Chief editor Suren Danielyan –  
Erevan, “Zangak-97”, 2009, -144p.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 34: